Կազմված է «25» «հուլիսի» 2021թ. և
բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ N 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2021 թվականի «հուլիսի» «26» -ի
N 57-Ա/2 հրամանով
Նախարար՝ _____ Վ.Դումանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի Սպանդարյանի
տարածքային բաժնի կողմից 18.02.2003թ
Գրանցման թիվ՝ 286.210.04877
Վկայականի թիվ՝ 03Ա 059193
ՀՎՀՀ 02510673
02.06.2020թ. գրանցված կանոնադրության թիվ «_____»
փոփոխությունը գրանցվել է ՀՀ արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
«02» «06» 2021թ.

«Ա. ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԵՐԵՎԱՆ 2021թ.

1. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) 41-րդ և 42-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«41. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված գույքը պետության անունից կարող է հանձնվել վարձակալության Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալության վճարներից (վարձավճարներից) ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

42. Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների (վարձավճարների) 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես կազմակերպությանն՝ իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրվում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ կազմակերպությանը փոխանցելու համար:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված (գրանցման համար 286.210.04877) «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրության անբաժանելի մասը: